

լինելով՝ կտկարանային հաւատալ եւ ընդունել Երրորդութեան խորհուրդը ի միում Աստուածութեան:

Յոյնք՝ Եգիպտացիք եւ այլ ազգերը, որոնք մարգուէս տկարութիւնը ճանաչելով մի զօրաւորի պահպանութեան կարօտ լինելը զգացին, մինչդեռ կրփնառէին գտանել այն հզօրը եւ չկարողանալով մտօք հասու լինել՝ սկսան իրենց կուռքերէն խնդրել իրենց պաշտպանութիւնը. Պարսիկք միայն եղան, որ արեգակը աւելի նմանութիւն Աստուծոյ համարելով՝ Միհր անուամբ աստուածացուցին եւ պաշտեցին:

Թէ որ Աստուծոյ այս չքնաղակերտը հեթանոսական դարու մէջ եզոզներին ի պաշտօն իւր հրաւիրեց, մեզ քրիստոնէիցս այլ մտօքնկատելու կպարտաւորէ: այս է, տեսանելով նորա պայծառութիւնը՝ Աստուծոյ անհուն լուսաւոր փառքը իմաստասիրել. տեսանելով նորա գեղեցկագիր մեծութիւնը, Աստուծոյ մեծազօր տէրութիւնը ճանաչել. տեսանելով նորա կենսատու զօրութիւնը եւ ներգործութիւնը, Աստուծոյ նախախնամող գթութիւնը միտք բերել, որ ամենը ստեղծեց եւ խնամօք կպահպանէ. Պօղոս առաքեալն եւս նոյնը կը արօղէ ասելով, «Աներեւոյթքն Աստուծոյ արարածովքս իմացեալ տեսանին»: այս է մշտնջենաւորութիւն, զօրութիւն, եւ Աստուածութիւն նորա:

( Ի յէրուսալէմ )

ՍԵՐՈՎՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԴԱՇԱՆՅ ՎԵՐԱՅ.

« Խորհուրդս այս մեծ է՝  
բայց ես ասեմ ի Քրիստոս  
եւ յեղեցի »

Եփես. Ե. 32.

Ի՞նչ է արդեօք այդ խորհուրդը՝ որ այդպէս խիստ սրտառու է եւ բացազանչում, ո՞վ հեթանոսաց վարդապետ սրբազանդ Պօղէ, մի՞թէ զորանից մեծ՝ զորանից փրկաւաններ չկան, որոց զանազանութիւն այնքան շատ է՝ զոր մարդիկ իւրեանց անցուկ եւ աղքատիկ մտքով չեն կարող որոշել եւ սահմանափակել:

Պան այո՛, պատասխանում է երանելին, շատ կան, ինչպէս ուղղափառ սուրբ Լեկեղեցին եօթն է բաժանում, եւ կայ զորանից գուցէ մեծը եւս, բայց ես զորան իրաւամբ նմանեցուցանում եմ՝ Քրիստոսին՝ եւ նորա սուրբ Լեկեղեցւոյն, ըստ որում է խորհուրդ նոր օրինաց հաստատուած Քրիստոսից՝ որով տրուած է լինում շնորհք ամուսնութիւնը սրբութեամբ պաշտողաց համար, եւ հետեալէս մեծ եմ բացազանչում նորա համար՝ որ ամուսնութեան արգասեօք՝ այս ինքն ծննդական ածեցմամբ եթէ չէ բազմապատկած հաւատացելոց սերունդ, միւս խորհուրդք ում վերայ կարող են կատարուիլ: Եպաբէն ո՞չ գրի:

Մովսէս Հրէից խստասրտութեան, իսկ Մահմետը իւրայնոց բարուց համեմատ բազմակնութեան հետեւած, միանգամայն արձակման թուղթը կամ ապահարզանի օրէնքը տուել են Հրէից եւ մահմետականաց: Իայց ի՞նչ պիտի ասենք Քրիստոնէական ընդհ. Լեկեղեցւոյ համար, որոյ



մէջ ևս՝ բացառութեամբ զիւղական և հասարակ կեանքերի, այնքան արհամարհ, և այնքան ստորին կարգի, մի հասարակ ծէս է ճանաչուած, և այնքան փոքր կերելի իմ քարոզած մեծ խորհուրդը, որ կարծես թէ հրէական և մահմետական ամուսնական դաշնակցութիւնից համարեա՞ ոչինչ՝ կամ մի աննշան տարբերութիւն ունի: Թող սոցա վերաբերեալ զանգատը մնայ մի ուրիշ յարմար ժամանակամիջոցի, խօսինք ամուսնութեան սկզբնաւորութեան վերայ, որոյ համար է մեր իսկ նպատակը:

Ներկոցունց լծակցեկաց, այս ինքն երիտասարդի և օրիորդի ամուսնութեան համար նախնական պատրաստութեան սովորական բառով՝ *Նշանադրութիւն* է ասուում: *Նշանադրութիւնն* ընդարձակապէս առնելով՝ հաստատելի մի իրողութեան առհաւատչեայ իմն է: Այս սահմանը թէ և կվերաբերի ամեն պայմանի, ամեն առուտրի, ամեն դաշնադրութեան և ինչ, սակայն յատկապէս առնելով՝ կենթադրէ մանաւանդ մի երիտասարդի և մի օրիորդի փոխադարձ հաւանութեամբ ընդ միմիանս ամուսնութեան սուրբ լծի տակ հպատակելոյ հաւատչեայն, որոյ երեւելի նշանն է մի մատանի և մի խաչ: (Վիտմամբ\*)

(\*) Այս դիտումն է սրբազան Հարց՝ Թէ երիտասարդը խոստովանում է վկաների մօտ իւր անկարողութիւնը իշխել իւր մարմնոյն. ես ասում է այս առհաւատչէի իմ մարմնոյ իշխանութիւնը յօժարութեամբ յանձնում եմ այս օրիորդին: Եւ օրիորդը սիրով ընդունում է, կրելով մատանին մատում, ի նշան յաւիտեան ի սրտէ սիրելոյ նորան, և վաղայն կրելով զիսոյ վերայ, ի նշան յաւիտեան պահպանութեան համեստութեան մի միայն ի վայելումն

ասում եմ փոխադարձ հաւանութեամբ, այս ինքն ընտրել, հաւանել, ապա ամուսնանալ: Բայց արժան է մտածել, թէ ում արդեօք կամ որոց արժան է ընտրել զփեսայացուն կամ զհարսնացուն, որպէս զի յետ պատկան չծաղի նոցա մէջ անախորժ իմն կենակցութիւն: Ոմանք ի նորասիրաց՝ տան այդ ընտրութեան միայն փեսայացուն և հարսնացուն որոշումը՝ օրինակ բերելով եւրոպացի ազգեր, զօ. Վերմանացիքը, Անգղիացիքը և ինչ. ասում են՝ լաւ է երկար միջոց, այս ինքն ամիսներով՝ տարիներով իրարու մօտ մնան, փորձեն զերեար, թէ հաւանելի՞ են արդեօք բնաւորութիւնք, յարմար են ի կենակցութիւն, միւս փորձերը թող մնան. իսկ եթէ ոչ, մնաս բարով. բայց համեստութիւնը ուր պիտի թողուն՝ ում տան, այդ իմ հասկացողութիւնից բարձր է:

Գուցէ պատասխանեն նորասէրք. Նւերոպական շատ ազգերի երիտասարդք և երիտասարդուհիք ապագայում ծագելիք վտանգը կանխաւ գուշակելով՝ իւրեանց կուսութիւնը սրբութեամբ պահում են. ուրեմն մեր Հայոցս ընտրելիքն էլ թող պահեն, և կպահեն:

Շատ լաւ. զիցուք թէ նորանք կպահեն, ով զիտէ գուցէ՝ եղանակի ազդեցութեամբ նոցա ողջախոհութիւնը բուռն է

նոյն երիտասարդի. իսկ ծնունամածի ժամանակ՝ ծնող վկաների մօտ կրտայ յաջ երիտասարդին, խոստովանելով և նա իւր անկարողութիւնը իշխել իւր մարմնոյն. ես՝ ասում է, այս ծնոս նորա յաջը տալով՝ իմ մարմնոյ իշխանութիւնը յանձնում եմ այս երիտասարդին: Ըստ այնմ, զի այրն մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ կինն, եւ ինչ: Ա. Կորնթ. Ե. 4:



կրից վերայ, կամ դուցէ՛ նոցա երիտա-  
սարդք եւ օրիորդք լուսաւորուած կրթ-  
թուած մէկ մէկ հրեշտակներ . . . են, կա-  
րողանում են՝ եթէ սուտ չէ, պահել իւր-  
եանց կուսութիւնը, և կամ նորանք զայդ  
ոչ մեղք են ձանաչում և ոչ ամօթ: Բայց  
դուք նորասեր եղբարք, կերաշխաւորէ՛ք՝  
որ Հայաստանի եղանակը այդ բնազդեցու-  
թիւնը ունի, կերաշխաւորէ՛ք՝ որ Հայոց  
նորաօրէք այնքան զարգացած լինին ուս-  
ման մէջ՝ որ միմեանց պատահելիս նո-  
ցա խօսակցութիւն լինի այն վսեմ զա-  
ղափարի վերայ, որ կենդանութիւնը ան-  
զամ մոռացած լինին. և կերաշխաւորէ՛ք՝  
որ նոքա մեղք ձանաչելով չսեւանան խրդ-  
ձի դէմ, և ամօթ չձանաչելով չկարմրին  
մարդկանց պարկեշտ դասակարգի առաջ:  
Աստուծոյն պէ՛ք. վախենում եմ՝ վերջը  
ժայթքէք, թէ քնաս չունի, ի՞նչ կայ  
զօ. եթէ ես մի ուրիշի անհամեստը կրնա-  
րեմ ամուսնանալ՝ և նա էլ փոխադար-  
ձաբար իմը կրնարէ, ուրեմն մի և նոյն է:  
Նա, զուցէ վերջինի հետ ես Համա-  
ձայնեցայ, յետոյ. յետոյ զայն ես կ'ըս-  
տում՝ մի ուրիշը կրնարեմ: Աղբալի՛ վի-  
ճակ: Աւրեմն այդ յօռի շրջանը շարունա-  
կելով՝ ցմահ անամուսին մնալ էք կամե-  
նում: Խաբուած էք, դուք ազատու-  
թիւնը թողած՝ ապականութեան էք ծա-  
ռայում, և ուզում էք ուրիշին էլ այդ  
խորխորատը դրէք: Քանի որ այդ տե-  
սակ ընտրողութիւն չկայր, որ ազդի լծա-  
կիցք թէ ի յաջողութեան և թէ ի ձա-  
խորդութեան մահու չափ փոխաբնիկ են  
կեանքը իրերաց համար այնպէս՝ ինչպէս  
Հայաստանում և Հայոցը եղած է: Այդ  
մոլութեան արդասիրք չէ՝ որ օր քան

զօր իբրեւ ժանտախտ տարածվում է հա-  
սարակութեան մէջ, երիտասարդը նշա-  
նած բոլեկից շարունակում է զիշեր ցե-  
րէկ համարձակ երթեկեկութիւն անել օ-  
րիորդի մօտ. թէ ոչ՝ վաղ նորան, լուսոր-  
դայ չէ. ահա համեստութեան արդիւնք,  
ահա ամօթխածութեան պտուղ: Ի՞նչ  
ինչու էք պօռնոտում, քմծիծաղ անում,  
ապացուցութիւն էք ուղում. դա երբէք  
ապացուցութեան կարօտ չէ, ինքզինք կա-  
պացուցանէ, կարդացէ՛ք ձխական քա-  
հանայի չափաբերական մատենանր. կտես-  
նէք՝ Յունկարին պսակուողի նորակնունք  
զաւակը՝ Մայիսի կամ Յունիսի մէջ ար-  
դէն դրուած:

Թերեւս պիտի ստէք. քո ասածը ի  
հետեւն՝ չկայր այդպիսի չափաբերական  
զեղծութիւն: Այլին այն անկարելի է բա-  
ցառութիւնը բայց հազարէն մէկ. որով  
հետեւ նորանց նշանած ապագութիւն ար-  
բեր էր այժմեանից, երիտասարդութեան  
այնքան սանձարձակ համարձակութիւն  
տրուած չէր յաճախել աներանց տունը,  
և եթէ կամենար էլ զաղաղողի՝ ո՞վ զի-  
տէ՛ յաջողէր կամ չյաջողէր. իսկ թէ՛  
Տէր մի՛ արասցէ՛ յայանուէր, թուքու-  
մուր կանէր հասարակութիւն, և մինչ  
այս մինչ այն նորա պարկեշտութեան  
քօղը չմաշուած ծնօղք կաճապարէին պը-  
սակել:

Իմ խօսելոյ նպատակը այն է, որ պը-  
սակելիք դուն զործեն, եթէ ինձ կրթսն  
կուսութիւնը սրբութեամբ պահպանեն  
մինչև ամուսնութեան նշանաւոր կէտը.  
Քրիստոսի խաչը, քահանայի աջը օրհ-  
նութեամբ հանդերձ նոցա ամուսնութեան  
անկողինը այն օրը կ'օրհնէ՛ երբ նոքա կու-



սութեամբ կպսակուին: Պօղոս զհաւատացեալս խօսեալ առն՝ իբրե զկոյս մի սուրբ յանդիման կացուցանէր Վրիստոսի. (Բ. Կորնթ. ԺԱ, 2): Յովսէփ խօսնայրն Մարիամու աստուածածնի՝ ճանաչելով նորա յղութիւնը՝ խորհեցաւ լռելեայն արձակել զնա. (Մատ. Ա, 19): Յակովբ նահապետի որդիք Վինա անուն քեռ համար, որոյ կուսութիւնը էր ապականել Սիւքէմ որդին Ամօրայ, բաւական արիւնհեղութիւն արարին ի վրէժխնդրութիւն կուսութեան. (Օհնդ. ԼՊ, 25): Այսքան ապացոյց թող բաւական համարուի նորասիրաց, այժմ խօսենք հնոց և հնասիրաց դէմ, որք պնդում են, թէ լաւ է միայն ծնօղք, կամ ոյք և իցեն սրտացաւ բարեկամք՝ ընտրեն:

Այդ սխալ կարծիքը կնշանակէ նոցա անձնիշխան կամքը խել, և հեթանոսաբար բռնի ազատութիւնը նուաճել. այսոյն ճշմարիտ է, որ նոցա երիտասարդակար բռնն կիրքը կմտայէ որոշ տեսանել, անփորձ կեանքը՝ զիւրաթէք զազափարը կարող են սխալեցուցանել ընտրողութիւնը: Ապա ուրեմն լաւ է ըստ իս, որ ծրնողք, և կամ որոց անկ է, իւրեանց բազմափորձ և հասուն խելքով, առանց ինչ և իցէ կրքի և շահամոլութեան՝ ընտրեն, և համոզկեր յորդորանքով քան թէ բռնութեամբ՝ եթէ սխալուած են՝ կրից մըռայլը փարատեն, և սխալը ճշգրիտ փաստերով ուղղեն, և ըստ կանոնի սուրբ Հարց՝ նշանը այս ինքն մատանին և վալայն՝ իւրեանց իսկ ձեռօք տալով և ընդունելով վերջացնեն կատարեալ հաճութեամբ փեսայացուին և հարսնացուին. աւելին քան զայդ ի չարէն է. և այդպէս

էլ՝ ինչպէս տեսնում ենք հասարակութեան մէջ, կատարվում է, սակաւ բացառութեամբ: Տայր երկինք՝ այդպէս մնային:

Այս և մի զեղծմունք նշանեկաց հասակի նկատմամբ. զորա համար վճուել են հողերը և մարմնաւոր օրէնք, քսան կամ առ նուազն տասն և ութ ամեայ երիտասարդն, իսկ տասն և ութ կամ առ նուազն տասն և հինգ ամեայ օրիորդն պիտի լինի, թէ և բժշկութիւնը այլ ևս առաւել է ցուցանում\*), և զիջողութիւն և կամ բարձի թողին այլ ևս պակաս. այնու ամենայնիւ ըստ հասարակաց առածին, ամենայն ինչ ժամանակի կսպսէ, բայց ժամանակը ոչնչի. եթէ հետեւենք բնութեան օրէնքին, զորա մնաստեղութիւն պարզ երևում է. զոր օրինակ, վեր առնենք մի կոկոն ծաղիկ, այս ինքն վարդ, եթէ նորան տարածամ բռնի բաց անենք՝ մի կամ կէս ժամ ժամանակից առաջ, նա շատ շուտով կթոշնի, և եթէ պատէճ ժամանակիցն էլ անցկացած լինի՝ նորան էլ ակտրժելի հոար և կայտառ վայելութիւնը կպակասի. այսպէս իմն և տհաս ամուսնացելոց վեճակը: Իսկ իմ կարողութենից վեր է եղանակները և աշխարհագրական շատ հանդամանքները քննելը, որք դարձեալ մեծ կարեւորութիւն ունին այս խնդրում:

Այս և մի ուրիշ հոգեկան զեղծմունք, զոր հասկամ չհաս ենք անուանում: Վորա մասին պարտաւոր են ամեն մի անհատ էլ հսկել, մանաւանդ հողերը Աշարշութիւնք ըստ չափու անձնիւր պարտաւորու-

(\*) Տես Գաղտնիք բնութեան:



թեան : Այս խնդիրը ևս բաւականին կնճռոտ է, լաւ էր եթէ խոյս տայի իմ տկարութեան պատճառաւ, և թողութի քննութեան հմուտ աստուածաբանից և բնագիտաց, բայց որ այս ձեռնարկի ամենակարեւոր կէտն է, ապա հարկ է բաւ կարելւոյն խօսել Տէրամբ, Արեմն աղաչում եմ՝ թող զիջանին բանագէտք ազգիս, եթէ կրարեհաճին ընդունել զիմ այս ազգասիրկ լուծայն, որովհետեւ պատի համար ամեն մի փոքր քար էլ կհարկաւորի :

Այս հարցի անունը սովորական բառով ճէ-դագիր-ի-ն կամ պոք կնք անուանում, որոյ համար սրբազան Հարք սահմանադրած են հօթն պորտէն պակաս չլինիլ, և բաժանել են մասնաւորապէս բնական արեւակցութիւնը երեքի, այս ինքն ի վեր, ի վայր և ի կողմն : Ի վեր՝ զօ. մեք, մեր հայրը, հօր հայրը՝ այս ինքն պապը, պապի հայրը և պապի պապը. ի վայր՝ զօ. մեք, մեր որդին, որդւոյ որդին այս ինքն թոռն, թոռան որդին և թոռան թոռն. ի կողմն՝ զօ. մեք և մեր քոյրը, մեր որդին և քրոջ որդին և ին : Այսպէս իմն և հոգեւոր և օրինական ձեռնադրութիւնը :

Այս կանոնադրել են, բայց հարցի կրնձիուն, ինչպէս ասացի, այն մասնունն է՝ թէ արդեօք՝ ի՞նչ ազգիւրից է սունուած հեռացնել մինչև հօթն պորտ. վասն զի ինչպէս զննում ենք՝ սուրբ զօրոյ մէջ այդքան հեռաւորութիւն չէ երևում :

Աստասխանում են սուրբ հարք, այս ասում են, հին աստուածաբանութեան զարում, այս ինքն Քրիստոսից առաջ չկայր այդքան հեռաւորութիւն, այլ իբրև հարկ՝ իւրեանց իսկ մերձաւոր

ազգականից ընտրում էին զփեսայացուն և զհարսնացուն, ինչպէս անկ էր Ասուայ Տուրիա որդւոյն Տօրիթայ. (Տօփ. 12, 13), և Հուրթ Քոստին (Հո. 4, 4) և ին, և այս այն մտքով՝ որ Աստուածային իմաստութիւնն ուղղում էր Մեսիայի ազգաբանութեան մէջ ամենեկին խորթութիւնն տեղիք չունենար, այն հիման վերայ՝ որ Աստուածային անհամեմատ օրհնութիւնը Արքահամու եւ նորա որդւոյ վերայ յաջորդաբար հեղյով՝ ցՄեսիայն հասաներ, ըստ այնմ, Ի զաւակի քում՝ — Մեսիայի նկատմամբ, — օրհնեցն ամենայն ազգք երկրի (Օննգ. 14, 3) և Իսահակաւ կոչեցի քեզ զաւակ. (ԻԸ, 12) : Եւ միւս ևս պատճառ. Հրէից սակաւութիւն ազգութեան շուրջը պատած էր շատ կռապաշտից ազգաբնակութիւն : Անշուշտ զգուշանալ հարկաւոր էր խոհեմութեամբ խնամեկան յարաբերութիւնից, որ մի՛ գուցէ նոցա կրճապաշտական անգոսնկի արարողութիւնքը սովորէին Հրէից նորահաւատ ազգք, և այն սերը՝ որ միջնորդութեամբ խնամութեանն կարկի էր տարածուիլ ընդհանուրի մէջ, գուն զործեցին սահմանափակել անձնիւր գերդաստանի մէջ : Իսկ զկնի Մեսիայի՝ պարտ և արժան էր այդ մարդկութեան միութեան շաղկապը՝ որ մի ծըմարիտ կրօնի յաակութիւն է, տարածուիլ մարդկային կեանքի մէջ, որպէս զի Քրիստոնէական աշխարհն սէր վայելէր :

Գուցէ չհամոզուին հիւանդամիտք ոմանք ասելով, եթէ այդպէս լինէր Աստուածային միտքը, կարելի էր Նոր Աստուածային աւանդել մեզ :



Պատանխանում եմ ես, այո՝ չկան Նոր Պատկարանում նկարագրական փաստեր, բայց կան այնպիսի մակաբերականներ, զորս եթէ բժոռ չեն ականողիք, և հիւանդ չեն միտք, կարող են տեսանել ինչպէս զօր հասարակ, և համոզուիլ առանց տարակուսանաց:

Ինչպէս Աստուածային անստերիւր և անսայթաք յայտնութիւն պատմում է, ամուսնութեան սկզբնաւորութիւնը սկիզբն է առել նախահօր և նախամօր կեանքից: Բայց թէ ի՞նչպէս է սկսուել, և ժամանակ առ ժամանակ ի՞նչ տեսակ փոփոխութեանց ենթարկուել, և ո՞ր ուժեր ենթարկուողք, և մինչև ո՞ր հասած դարձ, պատմում որքան զօրէ իմ տկար զբիւ:

Տեսնելով Արարչին զմիայնութիւն նախամարդոյն, որոյ ընկերական էր կեանք, առաւ նորա կողերից մինը և լցրեց պակասողը մարմնով, և առեց Ազամայ ի կին: (Օհնդ. Բ, 23): Ահա քեզ մի աններելի չհասութիւն, որ սորանից մերձաւորագոյն չի լինի. բայց ի՞նչ, որ օրիորդի հետ ամուսնանայր, որ ոչ ոք զուէս չկայր, և մի ուրիշը ստեղծել՝ անմարթ էր հեռատես իմաստութեան. վասն զի եթէ իւր իսկական կողից չլինէր, ոչ ի յաջողութեան սիրալիր ընդունելութիւն կ'յաջորդէր, և ոչ ի ձախորդութեան կարեկցութիւն. և ինչպէս միւս կենդանիքը, Ադամ որիչ մարդ կ'ձանաչուէր, սա՛ որիչ՝ ուրեմն սորան անուն տանք **Է՛կ ՊՐԷ:** Իսկ սոցա զաւակունք փոքր ինչ հեռացան այդ չհասութեան տաղնապից. և որովհետեւ ուրիշը չկայր՝ ուրեմն եղբայր և քոյր միմեանց հետ անկ էր ամուսնանալ,

և այս հաւանական է՝ ինչ որ աւանդում են, թէ նախամայր միշտ երկորեակ բերելիս լինի, որովհետեւ աշխարհին մարդ էր հարկաւոր, որպէս զի առաջին ծնունդը երկրորդի, և երկրորդինը առաջինի հետ ամուսնանալ կարելի լինէր. ինչ և իցէ, զորա համար պնդելը չարժէ, և սորան անուն տանք **Է՛կ ՊՐԷ:** զօ. Պայէն և նորա ո և իցէ քոյրը՝ ամուսինը:

Եւ այս սովորութիւն տեւած է երեւում շատ թէ քիչ՝ մինչև Աբրահամ՝ նահապետ, և նորա օրերում փոփոխուած՝ ինչպէս ծանուցանում է սուրբ զիրքն: Ասէ արքայն Վերարացւոց Աբիմէլէքց Աբրահամ. զի՞նչ զործեցիր ընդ մեզ . . . ասացիր վասն Սառայի կնոջ քոյ՝ թէ քոյր իմ է . . . ասէ ցնա Աբրահամ, արդարեւ քոյր իմ է ի հօրէ և ոչ ի մօրէ (Օհնդ. Ի, 12). և սորան ևս անուն տանք **Է՛կ ՊՐԷ:** այս ինքն Աբրահամ, սորա հակամայրը, և Սառայ:

Եւ այս սովորութիւն տեւած է երեւում ցՄովսէս մարգարէ, և սորա օրերում դարձեալ փոփոխուած, այս ինքն ոչ համամայր և ոչ հակամայրը առնելիս լինին: Այր որ ասում է, որ առնուցու զքոյր իւր զառ ի հօրէ կամ զառ ի մօրէ, նախապէս են, սատակեսցն յերեսաց որդւոց ազգի իւրեանց. (Վեա. Ի, 17): Տեսնում ես սիրելի ընթերցող, ազգերի բաղմանալու հետ և ինամութիւնն զամ քան զզամ հեռանում է. ահա մի պորտ ևս աւելացաւ՝ այս ինքն փեսայացուն, համամայր քոյրն, հակամայր քոյրն, և միւս ևս այլ որ՝ ընդ որում կարելի էր ամուսնանալ:



Այդ դարձեալ մի ուրիշ պարզ ձեւ-  
դադրութիւն. ասում է, զառականս կնոջ  
և զզատեր իւրոյ մի՛ յայտնեցես, զզուտոր  
ուստեր նորա, և զզուտոր զստեր նորա մի՛  
առնուցուս յայտնել զառականս նոցա,  
զի ընտանիք քո են, ամբարշտութիւն է.  
(Վ. և Թ. ԺԲ՝, 17). զայս ևս եթէ հա-  
շուենք՝ կլինի շո՞ւ պարսպա՞նք:

Եւ այս օրէնք տեւած է երեւում մինչեւ  
ի Մեսիայն:

Իսկ արդ՝ եթէ ստուեր հանդերձեալ  
բարեաց կանչուած օրէնքը, քանզի զըս-  
տուեր հանդերձելոց բարեաց ունէին օ-  
րէնքն, ասում է, (Եբր. Ժ, 1), այդ-  
քան ողջամտութիւն զիտէ պահել, ապա  
նրբան ինքն բուն բարին. եթէ ստուերն  
սուրբ է, ապա նրբան մարմինը:

Ահեւը խոստացանք ցոյց տալ Նոր  
Ատակարանում մակարեւական փաստեր.  
ուրեմն շարունակենք:

Իսկն Տէրն մեր Յիսուս Քրիստոս ա-  
սում է, ոչ եկի լուծանել զօրէնս, այլ՝  
լնուլ. (Մատթ. Ե, 17): Երդ՝ շո՞ւ  
Բայը չի ցոյց տալ, թէ Մովսիսի օրէնքը  
ունկէտ էին, այլ՝ պակաս. Մովսէսը հա-  
ւատարիմ էր Աստուծոյ տանը իրրեւ ծա-  
ռայ, և Հրեայք էին զեռ արմուղ երկնջ,  
և ընդունակ չէին Աստուծոյ օրինաց լուծը  
կիսով չափ անգամ տանել. բայց Տէրն  
մեր Յիսուս Քրիստոս հաւատարիմ էր  
Աստուծոյ տանը իրրեւ օրդի. (Եբր. Գ,  
5—6). ուրեմն կարող էր ծառայի պա-  
կասօրդը լրացուցանել, և քրիստոնեայք  
իրրեւ լծարար եղ՝ պարտաւոր են այդ լու-  
ծը սիրով տանել, զի հին օրէնքն դաս-  
տիարակ եղն մեզ ասում է. (Վաղ. Գ,  
24). Բայց զի՞նչ էին օրինաց պա-

կասութիւնք. ահաւասիկ: Օրէնք հրա-  
մայում էր «մի շնար», բայց չէր զզու-  
շացուցանում նորա առթից՝ որոյ հետե-  
ւանք է շնութիւն, ահաւասիկ քեզ «մի  
շնար» օրէնքի մի զլիւաւոր պակասութիւն.  
բայց Քրիստոս ասում է, «որ հայի ի կին  
մարդ առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնա-  
ցաւ ընդ նմա ի սրտի իւրում». (Մատթ.  
Ե, 28): Եւս ասում էր «մի՛ սպանա-  
ներ», բայց չէր արգելած նորա առթից,  
բայց Քրիստոս ասում է, որ բարկանայ  
եղբօր իւրում տարապարտուց՝ պարտա-  
ւոր լիցի դատաստանի. (Մատթ. Ե, 21  
—22). և կարի իսկ քաջ, վասն զի սպա-  
նութիւն է արդիւնք բարկութեան: Երբ  
խմաստասիրիք սիրելի, միթէ պակաս չե-  
լին հին օրէնք, և նոցա պակասութիւնքը  
լրացուցած չէ՞ Տէրն մեր Յիսուս Քրիս-  
տոս: Այսպէս իմա և միւս օրէնքները:

Ապա ուրեմն համոզուիր, աղաչում  
եմ, եթէ դրական օրէնք՝ որ բնական Աս-  
տուածային օրէնքից է բղիած, զեռ պա-  
կաս է, և լրացուցանել է հրամայում  
բուն օրէնսդիրը, ապա նրբան կարեւոր է  
լրացուցանել և ծիսականը, որ ըստ ին-  
քեան պակաս էր ու պակաս. և եթէ նորա  
ծիսականը չորս պորտ է համարում հե-  
ռացուցանել, Քրիստոսինն եօթն իրա-  
ւունք չունի. չլինի զեռ չես համոզուած,  
ահա մի ուրիշը ևս:

Եթէ ոչ սուաւելուցու արդարութիւն  
ձեր քան զղալրացն և զփարիսեցւոց՝ ոչ  
կարէք մոռանել յարքայութիւն Աստուծոյ,  
ասում է զարձեալ Տէրն մեր Յիսուս  
Քրիստոս. (Մատթ. Ե, 20): Իսկ արդ՝  
փարիսեցւոց արդարութիւնը այն էր՝ ինչ  
որ փարիսեցին պարծենում էր տաճա-



բում, Աստուած իմ զոհանամ զքէն  
 և ին. (Ղուկ. ԺԲ, 11.) և իրաւի պա-  
 հում էր այդ մարդը ինչ որ աղօթում էր,  
 ինչպէս ասում է Տէր. «էջ սա — մաք-  
 սաւորի համար, — արդարացեալ ի տուն  
 իւր քան զնա. ուրեմն փարիսեցին իս-  
 պառ մեղաւոր չէր, այլ՝ պակաս քան ըր-  
 մաքսաւորն, միայն պարծանքն էր նորա  
 աղօթից արժէքը կոտորողը, իսկ զպրաց  
 արդարութիւնն էր՝ զրական և ծիսական  
 օրէնքներ քննել, և զուն զործել պահել  
 տալ, ըստ այնմ՝ «կապեն զբոխինս ծա-  
 նունս և զնեն ի վերայ ուսոց մարդկան, և  
 ինքեանք ոչ կամին մատամբ իւրեանց շար-  
 ժել զնոսա. (Մատթ. ԻԳ, 4, — Ղուկ.  
 ԺԵ, 46.) : Երգ պարզ բան է՝ քեան ա-  
 սելով՝ ցուցանում է օրէնքն : Ուրեմն զըպ-  
 րաց և փարիսեցւոց պահելի արդարու-  
 թիւնն էր՝ այլովքն հանդերձ՝ ամուսնու-  
 թեան մասին ևս հսկել՝ ոչ պակաս քան  
 զչորս պորտ : Ապաքէն իթէ քրիստոնէից  
 արդարութիւնն ձիւղազրութեան նկատ-  
 մամբ՝ ոչ առաւելուցու ցեօթն պորտ, ոչ  
 կարեն մոռնել յեկեղեցին Վրիստոսի, և  
 հետեապէս նորա յարքայութիւն :

Պուցէ պիտի ասուի, բառդ արդարեւ  
 ինչ ուրիշ առաքինութիւն է, ուրեմն  
 ինչ կապ ունի դա ամուսնական պայ-  
 մանի մէջ :

Եւ, այլ զրուածոց, այս ինքն բա-  
 րդական փրկիստփայութեան մէջ (Թե-  
 սաւր. զիրք Ժ.Օ, զԼ. 12), մասնաւո-  
 բապէս ուրիշ կերպ է խօսում և զորա  
 մասին յօդուածիս անձկութիւն չներեր  
 բացատրել, այնու ամենայնիւ սուրբ զրոյ  
 մէջ ընդարձակապէս առեալ՝ ամենայն մի  
 աստուածահաճոյ արարմանց կարելի է

արդարութիւն անուն տալ, զօ. յանդի-  
 մանէն Աստուծոյ զարքայն Պերարացւոց  
 զԱրիմեէք՝ Սառայի համար. Տէր, պա-  
 տասխանում է նա, զազգ մի անգէտ և  
 արդար կորուսանեմ, ոչ ապաքէն նա, — այս  
 ինքն Աբրահամ, — ասաց քոյր իմ է . . .  
 սրբութեամբ սրտի և արդարութեամբ ձե-  
 ոաց արարի : (Օհնդ. Ի, 5) : Տեսնում  
 ես՝ արդարութեամբ ասում է արարի : Աւ-  
 Յովսէփ այր նորա քանդի արդար էր, և  
 ոչ կամեցաւ առակել զնա (Մատթ. Ե,  
 19), տես որ արդարութիւն բառը զոր-  
 ծածական է սուրբ զրոյ մէջ՝ և ամուսնա-  
 կան պայմանների վերաբերութեամբ :

Պիտի ասուի, քո այդ սխալածքով զօ-  
 իթէ Ադամից ցՄեսիայն ժամանակ առ-  
 ժամանակ հեռանալով, հասել է ցեօթն  
 պորտ, ուրեմն երթալով երթալով պիտի  
 հեռեւել յանբաւս, տասն՝ քսան և չափ  
 պորտ :

Ոչ, այդ անկարելի է. նորա համար՝ որ  
 մինչև Մեսիայն օրէնսդիրք էին ոչ Գե-  
 ռուսեմ, այլ՝ Ժառայ, ուրեմն անկարելի  
 էր չենթարկիլ փոփոխմանց : Իսկ Մեսի-  
 այն որ ինքն է Տիրական օրէնսդիր, և նո-  
 բան ստորոգելի է անփոփոխելութիւնը,  
 ապա օրէնք նորա հարկաւոր են ան-  
 շուշտ անփոփոխ մնալ՝ ինչպէս ապացու-  
 ցանում է սրբազանն Պօղոս. «Ի փոփո-  
 խել քահանայութեան՝ ասում է, պարտ  
 էր և օրինացն փոփոխումն լինել : (Եբր.  
 Լ, 12) :

Արելի է առարկել, թէ այդպէս էր, այս  
 ինքն Մեսիայն ինքն էր բուն օրէնսդիր,  
 ուրեմն կարող էր փոփոխել և չորս պոր-  
 տը հինգ կամ եօթն առնել, բայց ին-  
 չով ես հաստատում այդպէս վճռական



օրէնք հաստատելը ոչ պակաս քան զեօթին պորտ:

Պատասխանումեն սուրբ Հարց բնականարար, բուն՝ այս ինքն մերձաւոր արենակցութիւնից ցհռաւոր արենակցութիւն հարկ և օգտաւետ է \*) այսպէս, մարդն է՝ ասումեն, բաղկացութիւն չորս տարրներէն. օրինակատարք այս չորս տարրաց հանդէպ պարտին արեան չորրորդ մասն ծննդական փոխանցմամբ սպառել տալ, որով ազգակցութիւն հեռացուցած, ապա խնամենալ: Չոր օրինակ, որդիք ունին միջնորդութեամբ մերձակցութեան ծնողաց՝ արեան բովանդակութիւն, և զաւակունք նոցա՝ զարեան կէս, թոռունք՝ զկիսոյ կէս և այլն, և ի սպառել արենակցութեան՝ պարտ է խնամենալ:

Գուցէ դարձեալ հետազօտուի իմանալոյ համար, թէ ո՞վ էր սուրբ Հարց այդքան բացարձակ իրաւունք տուել՝ այդ օրէնքին վճռական վերջակէտ տալոյ համար:

Եստուած՝ պատասխանում եմ, սորա են ասումէ Եռաքեալը՝ զորս եղ Եստուած յեկեղեցւոյ. նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարդարէս, և երրորդ՝ զվարդապետս. (Ե. Պորն/Թ. ԺԲ, 18): Եւ զարձեալ, և նա եղաւ՝ այս ինքն Քրիստոս, զոմանառաքեալս, զոմանս մարդարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս. (Եփես. Դ, 11):

(Ի յէրբայն.)

ՄԱՆՈՒԻ, ՔԱՆԱՅՑ ԱՍՏՈՒԱՆԱՏՐԵԱՆՑ.

(\*) Բժշկական արհեստ ապացուցանում է զանազան փորձերով թէ արենակցաց մէջ եղած լծակցութիւնը վնասումէ թէ ծնողաց ներքին զործիքական կարողութեան եւ թէ ծննդոց կազմակերպական տրամադրութեան:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՅՐԵՆԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ \*).

Բնական զիտութեան առարկայ են ոչ միայն երկինքն և երկիրս, ծովն և ցամաքը, բոյսերն և կենդանիներն, այլ և մարդն՝ արարածների զլիաւորը: Նկարագրական արուեստի բարձրագոյն նպատակն է՝ արտայայտել մարդկային դէմքի պատկերը, որ մինչև իսկ աստուածներին կյատկացուի — զեղեցկութիւն և կրքերը. այսպէս նաև բարոյական օրէնքը մարդին կհրաւիրէ դէպ ի ինքնածանօթութիւն, «մարդկային կեանքի բարձրագոյն նպատակն», ինչպէս կբացատրէ յոյն իմաստասէրների զլիաւորը, կամ «մարդկային բարձրագոյն առաքինութիւնն», ինչպէս կձայնէ եգիպտական մի հին արձանագիր Սայխում: Սոցա համաձայն, զիտութեան զլիաւոր

(\*) Պ. Շաֆհաուզէնի այս հետաքրքրական յօդուածը թարգմանած ժամանակնիս զանց արկնք բնագրի ծանօթութիւններն էլ յաւելացնել, որ ոչ այլ ինչ էին՝ բայց եթէ անուններ այն գրքերի եւ լրագիրների, ուստի որ հեղինակը քաղել է իւր յօդուածի նիւթը: Զանց արինք, վասն զի չէինք յուսալ թէ այն Անգղիական եւ Գերմանական մատենների անունները պահելովնիս օգուտ մի լինի ընթերցողներին, որոց ամենամեծ մասին այն լեզուներն անծանօթ են, այլ աւելի օգտակար համարեցինք ծանօթարանել երկիրների եւ անձերի այն կարեւոր անունները, որ առ հասարակ բիշ յայտնի են մեր մէջ: Այս ծանօթութիւնները ընդհանրապէս քաղած ենք Բույլէի «Պատմութեան եւ աշխարհագրութեան բառարանէն»:

Շան. Թարգմ.